

ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԽՈՐՀՐԱՐԱՆ

PARLEMENT
D'ARMENIE OCCIDENTALE



PARLIAMENT OF
WESTERN ARMENIA

ПАРЛАМЕНТ
ЗАПАДНОЙ АРМЕНИИ

Այլակրօն հայերը, բացման խօսք.

ՆԱԽԱԲԱՆ

Սիրելի ներկայներ, սիրելի հայրենակիցներ,

Երբ վերլուծենք երկու հազար տարուայ համաշխարհային իրադարձությունները Մեծն Տիգրանէն սկսած, ապա կը տեսնենք, որ ժամանակ առ ժամանակ Հայոց Բնօրրան Հայրենիքը բաժնուած է կայսրութիւններու միջեւ. հռովմէական, սասանեան, քիւզանդական, ռուսական եւ օսմանաեան:

Այդ կայսրութիւններուն ձեռնարկած աւերիչ արշաւանքները բզկտած եւ իրենց միջեւ բաժնած են Հայկական Բնօրրանը:

Յայտօր, պզտիկ եւ մեծ երկիրներու վերածուած այդ կայսրութիւններու քաղաքական նպատակները չեն փոխուած, աւելին՝ աւելցած են նաեւ այլ երկիրներու եւ այլ կազմակերպութիւններու կողմէ առաջ քաշուած բազմաթիւ նոր գործօններ:

ԵՂԵԼՈՒԹՈՒՆԸ

Հայկական Բնօրրանը բաժնեցին քաղաքական եւ կրօնական բաժանումներու, մենք՝ հայերս, ուզենք թէ չ'ուզենք՝ համակերպեցանք նոր եղելութեան, Անիի անկումէն ետք՝ մենք ունինք նաեւ Մահմետականացած Հայեր, որոնց վերաբերեալ մեծամասնութիւնը կը հետաքրքրուի՝ միայն համագումարներ եւ թիւեր ներկայացնելով:

Այսօր մեր երկիրը գրաւած Օսմանցիներու ժառանգները պետականօրէն եւ պատմաբաններու միջոցով կը փորձեն իւրացնել՝ օրինակ մահմետականացած Համշէնահայերուն, անոնց պատմութեան մէջ թրքական ցեղերու հետքեր «փնտռելով ու գտնելով», յետագային ըսելու, փաստելու եւ ապացուցելու՝ որ Համշէնահայերը թրքական ցեղի կը պատկանին, այսինքն թէ՛ մենք հայերս եկուոր ենք:

Վրացիները պետական ծրագիրով եւ քրիստոնեայ կրօնապետերու համագործակցութեամբ՝ հարձակում կը գործեն մեր պատմամշակութային ժառանգութեան վրայ, զայն իրենցը սեպելով, քաղաքականօրէն համաձայնութեան գալով դրացի պետութիւններուն հետ, խեղաթիւրելով ու կեղծելով մեր նախնիներու ձգած ժառանգութիւնը:

Թաթարներու կողմէ Նախճաւանի Նոր Ջուղայի մեր նախահայրերուն մշակութային Խաչքարերը խորտակելէ, գետնին հաւասարեցնելէ ետք՝ այսօր իրենց նախագահի մակարդակով, պետականօրէն կը յայտարարեն՝ որ Երեւան քաղաքը իրենց հողն է:

Ռուսերու տարիներով վարած նոյն քաղաքականութիւնը՝ իրենց ազգային շահերը, ինչպէս մնացած պետութիւններունը:

Եւրոպան, 1878-էն ի վեր՝ իր շահերուն համապատասխան որոշումներ կը մշակէ, ո՛չ մէկ իրական լուծում կուտայ խնդիրներուն՝ իսկ վերջերս ալ Հայաստանի Հանրապետութեան հետ համագործակցելու խոստումին ծիրէն ներս, առանց ապահովութեան որեւէ իրական երաշխիքներ տալու՝ կը վիժեցնէ համագործակցութիւնը:

Գալով մեզի՝ հայերուս, ռուսամոլ, արեւմտամոլ եւ այլ օտարամոլներու ու գաղափարական օտարամոլներու տեսակները պէտք է խստիւ հասկնան՝ որ բաւ է իրենց երազներով ապաւինին օտարներուն, որովհետեւ այդ երազները ժամանակաւոր եւ ապագային են:

Կոնստանդնուպոլիսի աթոռակիցներէն Արթին Եպիսկոպոս Աթէշը վերջերս՝ Վարդանանց տօնակատարութեան ժամանակ, շեշտադրումով յայտարարեց. «Հայ եմ ըսելով՝ Հայ չես դառնար...»

Նախորդ ժամանակներու, այս օրերու, թէ ապագայի Եպիսկոպոս Արթին Աթէշի պէս բոլոր մտածողներուն յիշեցնեմ, ըսեմ՝ լուսաւորչական, կաթողիկէ, աւետարանական, մահմետական, պուտտիստ, անաստուած, թէ այլ կրօններու պատկանելիութեամբ չէ որ Հայը Հայ Կ'ըլլայ... Հայը ՀԱՅ է իր գէնով, ծագումով, եւ ի մասնաւորի՝ արարչականութեամբ:

ԾՐԱԳԻՐԸ

Այս բոլորը վերլուծելէ ետք՝ բոլորիս կը մնայ վճռական աշխատանք տանիլ – մանաւանդ հայրենակցական եւ հայրենասիրական միութիւններու ընդմէջէն՝ ծրագիրներ

մշակելու, բաժան բաժան եղած ժողովուրդը, հոտը, տեսակը՝ ինչպես որ կ'ուզեք անուանեցեք, միացնելու՝ ազգային, պետական եւ իմացական նշանակութեան մէկ ծրագիրի շուրջ:

Ծրագիրի անուանումը. Վերադարձ ԱԿՈՒՆՔՆԵՐՈՒՆ, ԲՆՕՐՐԱՆԻՆ՝ մեր բոլոր հայրենակիցներով միասին, առանց կրօնական եւ կամ այլ խտրականութեան:

Ծրագիրը. Կազմակերպուինք իրականացնելու հայերու համախմբումը՝ ի խնդիր Արեւմտեան Հայաստանի ազատագրութեան, ի խնդիր Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան հաստատման՝ Արեւմտեան Հայաստանի մէջ, իր արդարադատ օրէնքներով ու Սահմանադրութեամբ, որ պիտի յարգէ ու պաշտպանէ մեր բոլոր հայրենակիցներն ու պետութեան քաղաքացիները՝ առանց կրօնի կամ այլ խտրականութեան:

Հարմանտայեան Արմենակ՝

Արեւմտեան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) Հաւատքի եւ Հայրենակցական հարցերու, համայնքային ու հայրենակցական հասարակական միութիւններու հարցերու մշտական յանձնաժողովներու ներկայացուցիչ,

10 Յուլիս 2016 թ.

Փարիզ